

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԳՎՐՏԼՎՊՎՅՈՒԹԵԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1) Առաջաբան ՄԻԱՑԻՐ-ի մասին

Կարողություններու համադրումը մեր ուժն է: Հայկական ոգեշունչ ունեցող ծառայություններ մատուցողները նշուած են մեզ մոտ:

Մեր Շարժառիթը

Դուք, անշուշտ, գիտեք այն զգացումը, երբ կը փնտրեք հաստատություն մը եւ կը յուսաք, որ մէկը լաւ խորհուրդ կրնայ տալ: Ե՛հիշտ յանձնարարությունը ոսկիի չափ արժէք ունի: Յատկապէս ծառայություններ մատուցողները պէտք է զիրար լաւագոյնս ճանչնան: Մենք մեր կարելին կ'ընենք՝ որ դուք ճանչնաք իրարու, որպէսզի կարողանաք իրարմէ օգուտ քաղել: Մենք այդ կարծիքին ենք, որ ճիշտ կապերը կարեւոր են: Միացէ՛ք եւ վայելեցէ՛ք Հայ ծառայություններ մատուցող գործարարներու առաւելությունները:

Մեր Նպատակները

Մենք կը փորձենք մէկ հարթակի վրայ միաւորել բոլոր հայկական կապ ունեցող ծառայություններ մատուցողներուն: Միացման նպատակը պէտք է արագ կապ գտնելն է թէ՛ ծառայություն փնտրող յաճախորդներուն, եւ թէ՛ ինքնին ծառայություններ մատուցողներուն համար: Շատ անգամ՝ մարդ շատ ոլորապտոյտ կը մտածէ եւ միայն ծառայուն նայելով անտառը չի տեսներ: Դուք ի մտի ունիք որոշ անձ մը, սակայն մի մտածեք, որ ան Ձեր փնտրած ճիշտ մասնագետ մարդն է: Կամ դուք նոյնիսկ տեղեակ չէք, որ մարդը ունի այդ մասնագիտությունը որը դուք կը փնտրեք: ՄԻԱՑԻՐ-ը ոչ թէ միայն իրարու հետ կապէ ծանօթներուն, այլ նաեւ կապէ ծառայություններ մատուցողներուն եւ տրամադրէ յաճախորդներուն ծառայություն մատուցող գտնելու արագ միջոցը:

Մեր Ծառայությունը

Այս հարթակի վրայ ծառայություններ մատուցողներու ցանկը կ'իրականացնէ ՄԻԱՑԻՐ խումբը եւ անվճար է: Ցանցի մասնակիցները կրնան որեւէ ատեն պահանջել իրենց մասնակցութեան ջնջուիլը: Կապող պարտաւորություն կամ վճարում չկայ: Այս կայքը կը գործէ անշահոյթ նպատակներու համար. հետեւաբար, կարող է որոշ ժամանակ պահանջուի իրաքանչիւր առանձին բովանդակութեան մշակման համար (տուեալներու թարմացում եւայլն): Ձեզի կը մաղթենք հմտություններու յաջող փոխանակում, ինչպէս նաեւ դրական իմաստով փոխգործակցող արեւտուր: ՄԻԱՑԻՐ-ի խումբը սրտանց շնորհակալութիւն կը յայտնէ բոլորին, որոնք կը փափաքին մաս կազմել այս նախաձեռնութեանը:

2) Տեղեկություններու Գաղտնապահութեան Հայտարարութիւն

Այսու համաձայն եմ իմ անձնական տուեալներու օգտագործման եւ մշակման հետ, որոնք-ներկայացուած են ներքեւի մասնաբաժիններով¹.

- Ծառայություն Մատուցողի Անունը
- Անուն Ազգանուն
- Կապի Տուեալներ (Հեռախօսի համարներ, Ելմակներ, Կայքէջ)
- Հասցէ եւ իմ կողմէ հայթայթուած այլ հասցէներ

- Մասնաճիւղ
- Անպարտադիր: ԱԱՀ Թիւր / Ընկերութեան Գրանցման Թիւր
- Անպարտադիր: Առցանց տարբերակ: Լուսանկարներ, լուկո
- Անպարտադիր: Խօսակցական լեզուներ
- Անպարտադիր: Տեղեկութիւն մատուցուած ծառայութիւններ մասին
- Համաձայնութիւն՝ տուեալները նաեւ փոխանցուելու նմանօրինակ կայքէջերու
- Համաձայնութիւն՝ ՄԻԱՏԻՐ-ի պարբերաբերթը ստանալու:

Դուք կամաւոր տրամադրած եք Ձեր մասին վերը նշուած տեղեկութիւնները: Այս տուեալները կը մշակուին Ձեր համաձայնութեան հիման վրայ՝ հետեւեալ նպատակներով.

- Ձեր տեղեկութիւնները տեսանելի եւ հասանելի կըլլան հանրութեանը www.miatsir.net-ի կայքէջի վրայ:
- Ծանուցման նպատակներով, ինչպէս նաեւ հաճախորդներու եւ այլ շահագրգիռ կողմերու օգտագործման նպատակով (փոխանցում, առաջարկութիւն եւ այլն):

Դուք կարող եք որեւէ ատեն ետ վերցնել այս համաձայնութիւնը: Ձնջման պարագային՝ Ձեր տուեալները այլեւս կարելի չէ օգտագործել վերոյիշեալ նպատակներուն համար եւ այդպիսով համապատասխան իրավունքները, առավելութիւնները եւ այլն կարելի չեն պահանջուիլ:

Տուեալները կը պահպանուեն առցանց հարթակի մէջ, ինչպէս նաեւ ներքին օգտագործման համար ստեղծուած տուեալներու տեղեկադարանի մէջ:

Ձեր տուեալները նոյնպէս կը մշակուին, գոնէ մասամբ, ԵՄ-էն կամ ԵՏԳ-էն դուրս: Պաշտպանութեան համապատասխան մակարդակը կը բխի Եւրոպական Յանձնաժողովի համապատասխան որոշումէն՝ համաձայն GDPR-ի 45-րդ յօդուածի:

Պատասխանատուութիւն

ՄԻԱՏԻՐ-ի խումբը պատասխանատուութիւն չի կրեր ծառայութիւններ մատուցողներու կողմէ տրամադրուող տեղեկատուութեան, տուեալներու, խորհրդատուութեան, եւ ծառայութիւններու համար:

Հրահանգներ օրինակաւորէն բողոքարկելու համար

Սկզբունքօրէն, Դուք ունեք տեղեկատուութեան, ուղղելու, ջնջելու, սահմանափակելու, տուեալներու տեղափոխելիութեան եւ առարկութեան իրավունքներ: Այդ ընելու համար կը խնդրուի կապուիլ մեզի հետ:

Դուք կարող եք մեզ հետ կապուիլ հետեւեալ ելմակի հասցեով. miatsir@outlook.com.

Լաւագոյն ողջոյններով,

Ձեր ՄԻԱՏԻՐ խումբը